

Մունիցիպալիտետի մարմինների ընտրությունների համար նախաձեռնող խմբերի կողմից առաջադրված քաղաքապետի/սակրեբուլոյի (ավագանու) անդամի մեծամասնական թեկնածուներին հերթական համարի շնորհման որոշ ընտրական ընթացակարգերի սահմանման մասին

Հոդված 1. Մունիցիպալիտետի մարմինների ընտրությունների համար նախաձեռնող խմբերի կողմից առաջադրված քաղաքապետի/սակրեբուլոյի (ավագանու) անդամի մեծամասնական թեկնածուներին հերթական համարի շնորհման նպատակով.

1. Նախ՝ վիճակահանություն է անցկացվում ընտրողների նախաձեռնող խմբերի կողմից առաջադրված քաղաքապետի թեկնածուների համար:

2. Քաղաքապետի/սակրեբուլոյի (ավագանու) անդամի մեծամասնական թեկնածու առաջադրող ընտրողների նախաձեռնող խմբերի ներկայացուցիչները, վիճակահանության նպատակով լրացված թերթերը, մեկ առ մեկ վերցնում են՝ ըստ քաղաքապետի/սակրեբուլոյի (ավագանու) անդամի մեծամասնական թեկնածուների ընտրական գրանցում անցնելու հաջորդականության:

3. Քաղաքապետի/սակրեբուլոյի (ավագանու) անդամի մեծամասնական թեկնածու առաջադրող ընտրողների նախաձեռնող խմբերի ներկայացուցիչների կողմից վիճակահանության նպատակով լրացված թերթերը վերցնելու հերթականությունը մինևույն օրը գրանցված թեկնածուների համար սահմանվում է՝ համաձայն համապատասխան նախաձեռնող խմբի կողմից առաջադրված քաղաքապետի/սակրեբուլոյի (ավագանու) անդամի մեծամասնական թեկնածուի գրանցման մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրության համարի: